

ՊԱԼԻԱՏԻՎ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՑԱՎԱԶՐԿՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՂՄԱԳԻՐ - 2024

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ՝ 2018թ.-ից «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի և 2023թ.-ից՝ Ժողովրդավարության Ջարգացման Հիմնադրամի աջակցությամբ իրականացնում է «Կյանք առանց ցավի» ծրագիրը, որի նպատակն է՝ բարելավել Հայաստանում պալիատիվ բուժօգնության և արդյունավետ ցավազրկման հասանելիությունը: Միայն 2023թ.-ին՝

- **Մոտ 300** բուժաշխատողների համար իրականացվել են ՀՀ ԱՆ ՇՄԶ կրեդիտավորմամբ վերապատրաստման դասընթացներ, տրամադրվել առանձին խորհրդատվություն,
- **Մոտ 1000** պացիենտների տրամադրվել է բժշկական-մասնագիտական և իրավաբանական խորհրդատվություն,
- Թե՛ գծերին ստացվել է **ավելի քան 2000** ահազանգ,
- Կատարվել են **60-ից ավել** մշտադիտարկման այցեր Երևանի և մարզային բուժհաստատություններ:



Համաձայն ԻԿԻՄ ՀԿ և ՀՀ ԱՆ դեղերի փորձագիտական կենտրոնի ուսումնասիրությունների՝ արձանագրվել են հետևյալ **դրական փոփոխությունները** [տե՛ս, կից աղյուսակներ 1,2,3,4].

- ✓ 2022թ. մոտ **60%-ով ավելացել է** ցավամոքման նպատակով պետական պատվերի շրջանակներում ձեռք բերված մորֆինի քանակը (գրամով),
- ✓ 2022թ. **ավելացել է** պացիենտներին անվճար հիմունքներով ցավամոքման համար տրամադրվող ավելի արդյունավետ պերորալ ընդունման մորֆինի չափաքանակը (տոուփերով).
- ✓ 2022թ. **ավելացել է** ցավամոքման նպատակով օփիոիդային ցավազրկող ստացող պացիենտների թիվը, մասնավորապես՝ Երևանում.
- ✓ **Ավելացել է** թմրամիջոց պարունակող դեղերի, մասնավորապես՝ ներարկման և պերորալ ընդունման մորֆինի նշանակման օրական միջին չափաքանակը՝ դառնալով 4-6 սրվակ (ըստ կարիքի և առանց սահմանափակման լինելու փոխարեն).
- ✓ **Ավելացել է** թմրամիջոց պարունակող դեղերի, մասնավորապես՝ մորֆինի դուրս գրման ժամկետը՝ դառնալով 5-7 օր (ըստ կարգի՝ մինչև 10 օրվա փոխարեն).
- ✓ Վերապատրաստված բուժաշխատողները **սկսել են հնքնուրույն**՝ առանց 3-4 հոգանոց պարտադիր հանձնաժողովի դուրս գրել թմրամիջոց պարունակող դեղեր:
- ✓ **Ավելացել են** պալիատիվ խնամք ցուցաբերող լիցենզավորված կազմակերպությունների թիվը՝ դառնալով շուրջ 30:



Աղյուսակներ.

1. ՀՀ ներմուծված թմրամիջոցների քանակները

Անվանումը	2020թ	2021թ	2022թ
Մորֆին	134200 ամպուլ	87050 ամպուլ	106480 ամպուլ

2. Գնված մարուր մորֆինի քանակը

Անվանումը	2020թ	2021թ	2022թ
Մորֆին	757 գրամ	942 գրամ	1382.4 գրամ

3. Պետության կողմից գնված թմրամիջոցների քանակները

Անվանումը	2020թ.	2021թ.	2022թ.
Մորֆին	56122 ամպուլ	68332 ամպուլ	31240 ամպուլ
Օրամորֆ	0	0	3000 տուփ

4. Թմրամիջոց պարունակող դեղեր ստացող պացիենտների թիվը երևանում

Վայրը	2020թ.	2021թ.	2022թ.
Երևան	290 պացիենտ	260 պացիենտ	297 պացիենտ

Հիմնախնդիր.

Թեև վերջին տարիներին ավելացել է թմրամիջոց պարունակող դեղերի (օփիոիդներ) նշանակման և օգտագործման քանակները, սակայն, ըստ միջազգային չափանիշների, դրանց կիրառումը բավականին ցածր մակարդակի վրա են գտնվում Հայաստանում: Դրանք նույնիսկ չեն ներմուծվում հաշվարկված տարեկան քվոտաների սահմաններում *[տե՛ս, կից աղյուսակներ 5,6]*: Թմրամիջոցների հսկման միջազգային կոմիտեի և ԱՀԿ-ի պահանջարկի հաշվարկման համատեղ ուղեցույցի համաձայն՝ Հայաստանում ցավազրկման կարիք ունեցողներին պատշաճ ցավազրկում ապահովելու համար 2022թ. անհրաժեշտ քանակը կազմում է **25.5 կգ** մորֆինի համարժեք ավիոնային ցավազրկողներ, այնինչ, օգտագործվել է մոտ **1.6 կգ**: Չարորակ նորագոյացություններ ունեցող պացիենտների 80%-ը կյանքի վերջին ժամանակահատվածում ունեն ցավազրկման կարիք: Ավիոնային ցավազրկողներով բուժման կարիքը միջինում տևում է 90 օր, իսկ մորֆինի միջին օրական դեղաչափը կազմում է 67.5 մգ է: Սակայն պացիենտները չեն ստանում համապատասխան տեսակի, չափի ու քանակի ուժեղ ցավազրկողներ: 5272 պացիենտի համար հաշվարկված իրական պահանջարկը նախատեսվել է **19.5 գր**, սակայն նշանակվել է ընդամենը **1.5 գր**: Ինչի հետևանքով պացիենտները շարունակում են տառապել ցավերի մեջ՝ խախտվելով վերջիններիս՝ ՀՀ կողմից վավերացված մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով երաշխավորված առողջության, ցավից և խոշտանգումից զերծ լինելու, որակական և քանակական չափորոշիչների ապահովման, մատչելիության, և այլ իրավունքները:

5. Մորֆինի օգտագործված և իրական պահանջարկի համեմատական բնութագիրը



6. Թմրամիջոցների ներմուծված քանակների, հաստատված քվոտաների և օգտագործված քանակների համեմատական աղյուսակ 2022թ.

Մորֆին	Իրական պահանջարկ (ըստ ԱՀԿ հաշվարկների)	Հաշվարկված և հաստատված քվոտա	Ներմուծված քանակ	Օգտագործված քանակ (պետության կողմից գնված և անվճար, տրամադրված քանակ)
2022թ.	25560 գրամ	8500 գրամ	2254 գրամ	1586.9 գրամ

Բժիշկները մասնակի կամ ընդհանրապես չեն տիրապետում ժամանակակից մասնագիտական և կլինիկական չափորոշիչներին, մասնավորապես՝ ցավի գնահատման, ցավային համախտանիշի կառավարման, օփիոիդների նշանակման, և այլնի վերաբերյալ: Իրազեկված չեն պացիենտների իրավունքների, բժշկական նպատակով թմրամիջոց և հոգեմետ նյութեր պարունակող դեղերի դուրս գրման և բաց թողնման կարգերի վերաբերյալ: Բացի այդ, բժիշկների և պացիենտների շրջանում *սովա է օփիոֆոբիկ/կարծրատիպային մոտեցումներ* թմրամիջոց պարունակող դեղերի նկատմամբ, մասնավորապես՝ կարծում են, թե կախվածություն կառաջանա, կամ միայն քաղցկեղ ունեցող անձանց համար է պետք նշանակել, այն էլ՝ միայն կյանքի վերջին օրերին:

Այժմ օփիոիդներ (հատկապես՝ մորֆին) սովորաբար օնկոլոգներն ու պալիատիվ բուժօգնության վերաբերյալ վերապատրաստում անցած բժշկներն են նշանակում, այնինչ, պացիենտին բուժող բոլոր բժիշկները նույնպես իրավունք ունեն են նշանակել դրա կարիքն ունեցողներին: *Եթե նշանակում են, ապա՝ քիչ քանակով*, սովորաբար օրական 2-3 սրվակ, այնինչ դեղաչափի սահմանափակում չկա որևէ իրավական ակտով: *Քիչ օրերի համար են դուրս գրվում*, սովորաբար մինչև մեկ շաբաթվա համար, այնինչ, մինչև 10 օրվա համար կարող են դուրս գրել: Թմրադեղերի դատարկ սրվակները *պահանջում են հետ վերադարձնել*, այնինչ, ըստ կարգի՝ դրանք ենթակա չեն վերադարձման:



Այլ խնդիրներ.

Բուժհաստատություններն ունեն ֆինանսական ռեսուրսների սղություն, որի պատճառով օփիոիդներ ձեռք չեն բերվում: Թմրամիջոցների պահպանման լիցենզիա ստանալու համար հարկավոր է պահման պայմաններ և լրացուցիչ վճարումներ կատարել: Հատկապես մարզերում բացակայում են թմրամիջոցների պահպանման լիցենզիա ունեցող դեղատները: Կամ լրացուցիչ ծախսերի պատճառով դեղատները ևս խուսափում են լիցենզավորվել:

Բուժհաստատությունները խուսափում են հաշվառումից հանել իրենց պացիենտներին, քանի որ ֆինանսական միջոցներից են զրկվում: Դրա հետևանքով պացիենտները զրկվում են անվճար հիմունքներով ցավազրկող դեղեր ստանալ, երբ կարող էին այլ բուժհաստատություն հաշվառվել և ստանալ համապատասխան դեղեր:

Առաջարկություններ.

- *Բուժաշխատողների լիցենզավորման պահանջներում ներառել, և վերջիններիս համար իրականացնել շարունակական վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես՝ ցավի գնահատման, ցավային համախտանիշի կառավարման, պալիատիվ խնամքի, ազգային և միջազգային չափորոշիչներին համապատասխան օփիոիդների նշանակման վերաբերյալ, ինչպես նաև՝ պացիենտների իրավունքների, էթիկայի և հաղորդակցման հմտությունների, բժշկական նպատակով թմրամիջոց և հոգեմետ նյութեր պարունակող դեղերի դուրս գրման և բաց թողնման կարգերի վերաբերյալ: Միաժամանակ, համակարգային խնդիրը լուծելու նպատակով՝ ՀՀ ԿԳՄՄ համագործակցությամբ իրականացնել բուհական, հետբուհական կրթական ծրագրեր վերոգրյալ հարցերի վերաբերյալ:*
- *Ստեղծել վերահսկողություն իրականացնող (ՀԿ ներգրավմամբ) մշտական մարմին, որը կգնահատի բժշկական կազմակերպությունների կողմից տրամադրվող բուժօգնության որակը (աուդիտ), բուժաշխատողների մասնագիտական գործունեության համապատասխանությունը (ազգային և միջազգային) բժշկական ու իրավական չափանիշներին՝ ձեռնարկելով համապատասխան պատասխանատվության միջոցներ: Քայլեր ձեռնարկել բուժհաստատությունների ղեկավարության կողմից՝ չափորոշիչների պահպանման նպատակով բուժօգնության տրամադրման ներքին գնահատման մեխանիզմ ստեղծելու համար, իսկ չափորոշիչները չապահովելու դեպքում՝ համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառել:*
- *Իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ՝ պալիատիվ բուժօգնության, բժշկական նպատակներով կիրառվող օփիոիդների մասին թյուր կարծիքը վերացնելու վերաբերյալ, և այլն:*

Ծրագրի և մշտադիտարկումների մասին.

«Կյանք առանց ցավի» հանրային արշավ/ծրագրի նպատակն է՝ բարելավել Հայաստանում պալիատիվ բուժօգնության և արդյունավետ ցավազրկման հասանելիությունը: Այդ ուղղությամբ իրականացվում են հանրային իրազեկման աշխատանքներ, բուժաշխատողների համար վերապատրաստման դասընթացներ՝ պալիատիվ խնամքի, օփիոիդային ցավազրկողների դուրս գրման մասին բժշկագիտական և իրավական կարգավորումների վերաբերյալ, տրամադրվում բժշկական-մասնագիտական և իրավաբանական խորհրդատվություններ, ինչպես նաև՝ կատարվում են քննարկումներ և մշտադիտարկման այցեր մայրաքաղաքային և մարզային բժշկական կազմակերպություններ՝ արդյունավետ ցավազրկման ապահովման և ընդհանուր իրավիճակի գնահատման, խորհրդատվության տրամադրման համար:

Մշտադիտարկումներն իրականացվում են Ծրագրի ղեկավար՝ Ժենյա Մայիլյանի և իրավաբան-փորձագետ՝ Վաղինակ Տեր-Հովհաննիսյանի կողմից, իսկ դասընթացները՝ բժիշկ-փորձագետ Նարինե Մովսիսյանի հետ համատեղ: Մշտադիտարկումները իրականացվում են ոչ ֆորմալ գործիքակազմով՝ նախապես սահմանված հարցաշարով, որը բաղկացած է երկու մասից՝ բժշկական կազմակերպության կողմից պալիատիվ բուժօգնություն տրամադրելու մասին և/կամ ցավի գնահատման, ցավային համախտանիշի կառավարման և օրենսդրական կարգերին տիրապետելու վերաբերյալ, ոլորտի բժշկագիտական և իրավական կարգավորումներին, համապատասխան չափորոշիչներին իրազեկ լինելու, կիրառելու, հետևելու վերաբերյալ հարցերից, մասնավորապես, թե ինչպես, ինչ կարգով, ինչի հիման վրա են ցավամոքման նպատակով օփիոիդներ նշանակվում, դեղերը դուրս գրվում, ինչպես են արդյունավետ ցավազրկումն ապահովում, և այլն: Անփոփում-եզրակացությունները կատարվում են առկա իրավիճակի, գիտելիքների, տեղեկությունների, իրականացված միջոցառումների/աշխատանքների վերլուծության, համեմատության ու գնահատման արդյունքում՝ հիմնվելով ազգային և միջազգային բժշկագիտական և իրավական կարգավորումների ու չափորոշիչների վրա:



**ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐՆ ՈՒՆԻ
ԱՌԱՆՑ ՑԱՎԻ
ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԸ**

«ԿՅԱՆՔ ԱՌԱՆՑ ՑԱՎԻ»
հանրային արշավ.

Պալիատիվ խնամքի և արդյունավետ
ցավազրկման հասանելիություն

ԹԵԺ ԳԻՃ՝ 094 422 922



Կազմակերպությունների մասին.

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը (ԺԶՀ), ստեղծված է Բաց հասարակության հիմնադրամների հենքի վրա, ձգտում է նպաստել Հայաստանում ժողովրդավարության, անվտանգության և մարդու իրավունքների առաջխաղացմանը: ԺԶՀ տեսլականն է ունենալ այնպիսի երկիր, որտեղ մարդիկ ապրում են արժանապատիվ, որտեղ երաշխավորված են նրանց խաղաղությունը, անվտանգությունը, ազատությունները, քաղաքացիական մասնակցությունը և սոցիալական արդարությունը:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ (ԻԱԻՄ) առաքելությունն է նպաստել ՄԻԱՎ-ով ապրող անձանց և ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել ռիսկային խմբերի կյանքի որակի բարելավմանը՝ վերջիններիս ներուժի զարգացման, ջատագովության և հանրային իրազեկման միջոցով: ԻԱԻՄ իրականացում է խնամքի և աջակցության ծրագրեր ՄԻԱՎ-ով ապրող անձանց համար, վնասի նվազեցման ծրագրեր՝ թմրամիջոցների ներարկային օգտագործողների համար, տրամադրում բազմամասնագիտական աջակցություն, ՀՌՎ դեղերի փոխանցում, ՄԻԱՎ-ի կանխարգելման միջոցառումներ, ինչպես նաև՝ պալիատիվ խնամքի և արդյունավետ ցավամոքման հասանելիության վերաբերյալ, և այլն:

